

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԳԼՈՒԽԻ ԴՊՐՈՑԻ ՄԵծ ՄԱՆՐԱԿԱՐ- ՆԵՐԸ ԹՈՐՈՍ ՏԱՐՈՆԵՑԻՆ

Այժմ քննենք այն մի շարք մանրանկարները, որոնք պատմում են Հիսուս Քրիստոսի տնօրինությունների մասին:

«Ավետուն» (Եկաց 13).— Այս փոքր մանրանկարի վրա Կույս Մարիամը արված է երուաղեմի Տաճարի առաջ կանգնած վիճակում։ Նրա դեմքի արտահայտությունը՝ լայն բացված աչքերի հետ, ինչպես և աջ ձեռքի դրությունը՝ ափով ուղղված դեպի դիտողը, արտահայտում են զարմանք և համակերպում Գարբիել հրեշտակի պատգամին, որը մոտեցել է նրան ձախ կողմից։ Կոմպոզիցիայի կենտրոնում տեղափորված է աղբյուրը՝ առշնում մի մեծ սկահակ, որտեղ ջուր է լըցվում, իսկ վերևում, աղբյուրի վրա, դրամած է մի սափոր։ Առաջին հայացքից քննվող մանրանկարը նման է թվում նկարից Մոմիկի 1302 թվականի Ավետարանի «Ավետման» տեսարանին։ Սակայն ավելի ուշադիր զբնութման դեպքում, կոմպոզիցիաների ընդհանուրության տակ բացահայտվում են նրանց տարբերությունները։ «Ձեր մոտ Կույսին օրնող հրեշտակ»-ի պատկերագրությունից բացի, որը պահպանել էր նկարից Մոմիկը, քննվող մանրանկարի մեջ ենք տեսնում մի այլ պատկերագրություն՝ «Կույսի օրհնությունը հրեշտակի կողմից տանը», այսինքն՝ Թորոս Տարոնացին տվել է երկու սխեմաների խաշամումը։ Նման բարդ պատկերագրություններ Թորոսը պահպանել է իր այլ ձեռագրերում։

* Տարոնակված «Էջմիածին» ամսագրի 1957 թվականի ԱՆ էլ-ից և Թ-ից։

Եթե Մոմիկը պատկերել է աղբյուրը զրի գնացած Մարիամին որպես երուսաղեմի Տաճարի Կույսի, ապա Թորոս Տարոնացին, Հիմքում առնելով այդ կոմպոզիցիան, լրացրել է այն այլ տարրերով, որոնք վերաբերում են երկրորդ սխեմային։ Այդ մասին վկայում է ինչպես Կույս Մարիամի հետեւց երևացող փափով բարձերով օթողը, այնպես և իլիկը, որ բռնել է նա ձախ ձեռքում։ Վերը քննված մանրանկարը, չնայած իր փոքր չափերին (էջի 1/6 մասը), կառուցված է գույների հակագրությամբ (կապուտ, կանաչ, շոշանագույն, վառկարմիր) և նրանց բաց երանագույն բժերի խաղերով ինչպես և սոկով, և թողնում է հաճելի, նույնինկ շատ հարուստ տպագրություն։

«Քրիստոսի Ծնունդը» (Եկաց 14).— Եթե այս մանրանկարի կոմպոզիցիան համեմատնենք 1307 թվականի «Եսայի Նշեցու Ավետարան»-ի²⁶ նույնանման մանրանկարի հետ, չնայած նրանց պատկերագրության ընհանուրություններին²⁷, այսուել ևս կարելի է նկատել մի շարք փոփոխություններ, որ նկարիչը ներմուծել է ավելի ուշ շրջանի աշխատանքում։ Երկու մանրանկարների մեջ էլ գոր-

²⁶ Տե՛ս Սիրակի Տեր-Ներսիսյան, «Վենետիկի Սիրիթարյան հայրերի մատենադարանի ԺԲ, ԺԳ և ԺԴ գարերի նկարագրգ հայերեն ձեռագրերը» (ալրում), Դարիք, 1937, Pl. XLVI, 103։

²⁷ «Քրիստոսի Ծնունդը» և այլ մանրանկարների պատկերագրության մասին հանգամանորեն տե՛ս Սիրակի Տեր-Ներսիսյանի հիշված աշխատանքին մեջ (բնագիր), Փարիզ, 1936 թ.։



Նկար 13

ծով անձերն են Հովհանները, մողերը, կաչալյր, որոնք պատրաստվում են նորածին Հիսուսին լողացնելու համար և այլն։ Եթե այստեղ Հովհանները տրված են ձախից, մողերը՝ աջից, իսկ Աստվածամայրը՝ մսուրի մեջ դրված Մանուկ Հիսուսի մոտ, խոմքը լրենց դիրքով՝ զեմքով դարձած են վերջիններին կողմը, ապա ֆնտարկվող Աստվածաշնչի մանրանկարում տհոնում ենք Հակառակ պատկեր։

Եթե 1307 թվականի ձևադրի մանրանկարում մարդկացին գիգուրաները երևում են լուսիս, մեծ դղումներով, ապա բննվող մանրանկարում նրանք տրված են առանց աչք ծակող աղավաղումների, իսկ նրանցից մի քանիսը (Աստվածամայրը, Հովսեփը, երարդը—ամենափոր տարիքով մողը և այլն), դրեթե անթերի են նկարի մեջ և բնական՝ իւնենց դիրքով Այդ գիտողությունը վերաբերում է և 1323 թվականի Ավետարանի մանրանկարներին։ Սակայն «Եսայի նշեցու Ավետարան»-ի մանրանկարը լուծված է զեւանկարչական ոճով, Մանրանկարի գեղանկարչությունը ուժեղանում է որոշ դետալներով, որոնք վերցված են իրական կյանքից, շրջապատող իրականությունից (օրինակ՝ շուզի գիգուրան, որը ուրախություն է արտահայտում, և իրեպագելու եկած մողերի իրակու ձիերը)։

«Քրիստոսի մերառյանը» (Նկար 15).— Այս մանրանկարի կոմպոզիցիան փոքր ինչ տարբերվում է «Եսայի նշեցու Ավետարան»-ի

Նույնանման մանրանկարից։ Անձեռաց բըռնած երկու Հրեշտակ-վկաներին ավելացված է երրորդը՝ վեր պարզած ձեռքերով (դա, իրենի, արված է մանրանկարի աշ մասի հավասարակշռության համար՝ ձախի հետ, որտեղ դրված է Հովհաննես Մկրտիչը): Վերջինս պատկերված է ոչ որպես ուժեղ տղամարդ, միշտ տարիքի, Հրամայող ժեսուով, ինպես նա նկարված է նախկին մանրանկարում, այլ նա այստեղ հանդես է բերված որպես զառամյալ ծերունի։ Հովհաննես Մկրտիչը պատկերված է օրնող ձեռքերով, շյուծված և կորացած կերպարանքով, որը մասնում է դողացող մարմնի տկարությունը։ Մրա հետ միասին նշենք, որ նկարից «Եսայի նշեցու Ավետարան»-ի մանրանկարի վրա աշխատելիս շի պահպանել Ավետարանի տեքտարանի տեքտարը։ Նա Հովհաննես Մկրտիչն հագցրել է թիկնոց, մինչդեռ, 1318 թվականի պատկերման մեջ, նա ձգուում էր առաջ Հովհաննես Մկրտիչի արգելն Ավետարանի նկարագրության համաձայն։ «...ունէր հանդերձի ստեղու ուղտուա։ Այստեղ հետաքրքրական է նույնպես տապարի (սակրի) պատկերումը՝ կախված Հովհաննես Մկրտիչի փիգուրայի հետեւի ծառից, որը հավանաբար է իմպուլիկ նշանակություն ունի։ Թորոս Տարոնցին տապարի նկարով, հավանաբար,



Նկար 14

ցանկանում է ակնարկել այն մասին, որ Հեռովդիսի ծննդյան տոնակատարության ժամանակ Հերովդիադայի աղջկա՝ Սալոմեի ցանկովթյամբ կգիտատեն Հովհաննես Մկրտչին (Մատթ., ԺԴ 6—11, Մարկ., Զ 17):

«Քրիստոսի մկրտությունը» մանրանկաւում համեմատաբար լավ են պատկերված Հորդանանի այլարանովթյունը, որտեղ ժայռերի տեղադրությունը ֆիգուրաներին հաջորդում է որոշ հետանկարային մտապատրանք, պլանայնություն: Մանրանկարչի թորոս Տևուոնացին իր այս նկարով մոտենում է հելլենիստական բնույթի բյուզանդական ակադեմիան²⁸, Դրա համար էլ, ինչպես կարծում ենք, պատահական չէ, որ շրջանակի վերին եղրին «Մկրտութիւն Տես» հայկական տեքստի կողքին պահպանված է նաև նրա հունարեն մարգմանությունը:

«Ղազարոսի ճարուրյունը» (նկար 16).— Այս մանրանկարի պատկերագրությունը, կապված հին-արևելյան, սիրիական սխեմայի հետ, ծափում է Զ դարում և զարգանում ԺԲ—ԺԳ դարերում: Հատկապես այն նմանվում է Մոսանի ձեռագրին²⁹:



Նկար 15

²⁸ Տե՛ս Միքարոսի Տեր-Ներսեսյանի հիշված աշխատառությունը (բնագիր), էջ 124:

²⁹ Նույն տեղում, էջ 125:



Նկար 16

Ղազարոսի գերեզմանին մոտեցող Քրիստոսի Փիգուրան (գերեզմանի կափարիչ հանված է մեռնողի ծառաներից մեկի կողմից) հանդիսանում է մանրանկարի կիզակեաց: Հիսուսին հետևում են աշակերտները՝ առաքյալները, նրանցից միայն մեկը՝ Հուդան, պատկերված պրոֆիլով, զնում է Քրիստոսի առջևից:

Կոմպոզիցիան կառուցված է շարժման հիման վրա, որտեղ ընդգծված է կուլմինացիոն կետը՝ Քրիստոսի ժամանումը: Քրիստոսի դեմքի արտահայտությունը՝ գլխի ոչ շատ խոնարհված դիրքը և բարձրացրած աշ ձեռքի շարժումը օրհնող մատներով, կարծես թե խոսում են այն մասին, որ նա պատրաստվում է հրաշագործության՝ մեռյալին հարություն առլու: Դրա հետ միասին առաքյալների դեմքի վրա արտահայտված է կասկածանքի հետ նաև սպասում, իսկ Ղազարոսի հրաշագաւաների ու ծառայի դեմքերին՝ տառապանք ու տիբրություն: Այդ վերջին զգացմունքը բացահայտորեն նըւռում է Հիսուսի ռտքերն ընկած Ղազարոսի երկու քույրերի դեմքերին: «Եսայի Նշեցու Ավետարան»-ի «Ղազարոսի հարությունը» մանրանկարում շարժումը դրեթե բացակայում է, բոլոր ֆի-



Նկար 17

գուրաները անշարժ են, և նրանք կարծիս թիւ է երկայացված են թիւ թիւ շատ անորոշ ու անշափելի շրջապատում, առանց զգացնել տալու խորությունը:

Խաչես քննվող, այնպես և ուրիշ մանրանկարներում ֆիգուրաները իրենց նկարներով անթերի չեն: Նկարչի մոտ թիւ չեն նույնիսկ կոպիտ աղավաղութերը: Այսպես, օրինակ, Քրիստոսի աջ ձեռքը այնքան մեծ է, որ եթիւ բաց թողնի, անկասկած կհասնի ծնկների կերպ: Ներքեւ Սակայն այդ անատոմիական մեծ անձտությունը անմիջապես չէ, որ աչքի է ընկնում, այլ նկատելով այն՝ ենթադրուեած է, թիւ կարող է պատահել, այնինչ նա բողնված է զիտակցարար, ավելի ընդգծելու շամար Քրիստոսի հրաշագործող ձեռքի շարժումը: Այս կարգի շեղումներ մենք նկատում ենք նաև Մոմիկի մոտ («Ուտնալված»-ն):

Նկարչի յուրահատուկ գունային դամաւայում համեմատաբար գիրակշռող տեղ է հատկացված շագանակագույն գույնին: Հետաքրքրական է նշել, որ այդ մանրանկարում նկատվում է այն սեալիստական ժեստ (որը կա և 1328 թվականի Ամերիտանում), որը նշված է եղել Սիրարիի Տիր-Ներսիսյանի կողմից «Ծոսայի Նշեցու Ավետարան»-ի Պա-

գարոսի «Կարության» առթիվ³⁰: Հարազատ-ները և ծառաների խումբը, որոնք ընդպառաջ են գալիս Հիսուսին, ձեռքերը մոտեցրել են իրենց քթերին, որպեսզի պաշտպանվեն Ղազարոսի նեխած դիակի հոտից: Այս առնչությամբ այդ մանրանկարները կապված են հին արևելյան մոռումնենտալ Հուշարձանների խմբին³¹:

«Ուտնալվա» (Նկար 17). — Սիրարիի Տեր-Ներսիսյանի «Վեհանետիկի Միմիարյան Հայրերի մատնադարանի Ժմբ», ԺԳ և ԺԴ դարերի նկարազարդ հայերեն ձեռագրերու աշխատության մեջ բերվում է պրոֆ. Միլիքի կողմից «Ուտնալվա» մանրանկարի երեք տիպի նկարագրություն՝ Հելլենիստական, կոպտական և բյուզանդական, որոնք հիմնված են պիսավորապես Քրիստոսի ձեռքի ժեստի առանձնահատկությունների վրա³²:

Մեր մանրանկարը ավելի շատ համապատասխանում է երկրորդ՝ արևելյան տիպին, որտեղ ուժեղ՝ կերպով արտահայտված է ուսալիստական դործունեությունը: Հիսուս արդեն անցել է ուսնալվային, իսկ Պետրոսը դեռևս բողոքում է, թեև հաշտվել է իր վի-



Նկար 18

³⁰ Սիրարիի Տեր-Ներսիսյանի Հիշված աշխատությունը (բիազիր), էջ 125:

³¹ Նույն տեղում:

³² Նույն տեղում, էջ 126:


Էակի հետ. մյուս առաքյալները կանգնած են նրա հետևում, խորֆում: Սակայն, այստեղ կա մի մանրամասնություն, որը բացակայում է կոպտականի մեջ: Մեր մանրանկարչի մոտ Քրիստոսը ձախ ձեռքով բռնել է Պետրոսի մի ոտքը, ազով սրբում է սրբիշով, որի մի ծայրը գցած է Քրիստոսի ոտին: Մանրանկարի մեջ համատեղված են երկու սխեմաներ՝ կոպտականն ու բյուզանդականը³³:

Այս մանրանկարում Քրիստոսը պատկերված է անմորուք (Կամ թե հազիվ նշարվող մազերով ծածկված դեմքով), այսինքն՝ տրված է այնպիս, ինչպես մենք նրան տեսել ենք Հին Կտակարանի տեսարաններում, իսկ մնացած դեպքերում նա մորուքով է: Մեր կարծիքով, Քրիստոսի երկակի կերպարը պատճառական երևույթ չէ, այլ հին ավանդություններին հետևելու և նկարչի կողմից տարրեր պատկերագրական սխեմաները օդագործելու արդյունք:

Մանրանկարը կոմպոզիցիոն տեսակետից այնքան էլ հաջող չէ լուծված, բայց այն հետաքրքիր է ինքնատիպությամբ, նորամուծություններով. բացի հիմնական՝ ներքեմի մասից, որտեղ ցուցադրված է ուսուալվայի



Նկար 19



Նկար 20

դորժողությունը, նկարչի կողմից տրված է նաև վերևի կեսը, որտեղ ճարտարապետական կառուցվածքները և ծառերը անդրադանում են արտաքին աշխարհը: Այդ պահը ուժեղացվում է առաջին հայացքից աննշան թվացող, բայց իրոք յուրահատուկ երեւուկով՝ պատուհանով: Եվ մենք տեսնում ենք, ինչպես փակված աշխարհում, մի հանդարտ, հաճելի բնակարանին է նայում անցորդը, որի շնորհիվ մանրանկարի երկու կեսերը չեն կարում մեկը մյուսից, այլ կապված են իրար հետ: Այդտեղ, կարծում ենք, պետք է տեսնել նկարչի փորձը՝ գիտակցարար վերակառուցելու մտավոր տարածականության առաջնային ներքությունը:

«Եւրին ընթրիք» (Նկար 18).— Այս փոքր մանրանկարի վրա (էշի 1/6 մասից փոքր), ձախակողմը պատկերված Քրիստոսը նստած է ձվաձև սեղանի առաջ, որի շուրջը տեղավորված են նրա աշակերտները: Տեսարանը պատկերում է այն պահը, երբ Հիսուս խոսում է իրեն մատնելու մասին: Առաքյալների դեմքին կարելի է կարդալ դարմանք, կասկածանք, երկընտրանք: Բայտ

³³ Այդ հին արեւելան պատճերագրության մեջ Հիսուսը միայն լվանում է Պետրոսի ոտքերը, չկազերով որպիշեն, որը կախած է նրա վեհականության մեջ և առաջականության մեջ է Պետրոսի ոտքերը և սրբում է այն:

որում միայն քրիստոն է հանգստությունը
պահպանում, ի հակադրություն թրեն մատ-
չող աշակերտի, որն ագանորեն ճգվում է
դեպի սեղանի գրայի ուստեղիքները: Հուզայի
գիմքը, արլած պրֆիլով, նկարչի մտա-
հոցացմամբ, արտահայտում է շարագործու-
թյուն, հանցագործություն: Հիսուսի և Հուզա-
յի կերպարների արդիակի հակադիր զուգա-
դրությունը հանդիսանում է այդ տեսարանի
կոմպոզիցիայի հիմքը:

Մանրանկարի պատկերագրությունը՝ բարդ է, այն կազմված է երկու սխեմաների՝ Հիմնարկելյանի և բյուզանդականի խաչաձևման հիմքի վրա, ըստ որում Հիմնականը Հանդիսացել է երկրորդը: Ընդհանրապես այն Հիշեցնում է ԺԱ—ԺԲ դարերի վաղ շրջանի աշխատանքները:

«Քրիստոսի խաչելուր յուներ» (նկար 19).— Այս մանրանկարի պատկերագրությունը սիրահակապագրով կիրական է. Աստվածամայրը և նիղակակիր զինվորը արքած են մի կողմամբ, իսկ Հռովհաննեսն ու սպոնգ ընսած զինվորը՝ մյուս կողմամբ: Մեր ծաղկողի մոտ ավելացված են նաև յուղաբեր կանայք: Թուրոս Տարոնացու հիշյալ մանրանկարի մեջ մտել է նաև գոթական սխեմայից մի մոտիվ: Նրա մեջ Քրիստոսը խաչված է մի զամանվ: Այդ մոտիվը համանաբար գալիս էր ժամանակակից Կիլիկյան մանրանկարչությունից: Քրիստոսին մոտ մարդկանց ձեռքերի ձեռքը, որոնք արտահայտում են տիրություն, միշտ և այն, համապատասխանում են կապագովկիրական սխեմային: Ողբում են հրեցանեները, որոնք, ինչպես և խաչի վերին մասը, դորս են գալիս շրջանակից: Մանրանկարի սահմանների այդպիսի խափառությունը կա նաև մյուս մանրանկարներում («Ունակվա», «Վերջին ընթրիթք», «Համբարձում» և այլն), ինչպես և ավետարանիների մի քանի նկարներում: Թորոս Տարոնացու աշխատանքներում այս երեսությը ավելի է զարգացել նրա աշակերտ Ավագի մոտ³¹: Դրանով խախտվում է մանրանկարի սահմանափակությունն ու փակվածությունը: Եթեևանքով մանրանկարն ստանում է որոշ տարածականություն: Մակեոլի կողմից ավելի լակոնիկ կերպով է պատկերված մի գամով՝ «Խաչելության» կոմպոզիցիան 132 թվականի Ավետարանում (էջ 276ա), որտեղ խաչված Քրիստոսի կողքերից արքած և միայն Մարիամն ու Հովհաննեսը, հիշեցնեալով վարպետ Մոմիկի նման մանրանկարը 1302 թվականի «Մտեմիանոս Օռեկանի Ամենա

34 *SL*" 1329 թվականի Ավետարան, 1337 թվականի Ավետարան, 1314—1358 թվականների «Օշին» արքայի Առաջապահությունը (Հայկական ՍՍՌ Գիտական Մտահենացային, ձեռ. № 7650, 212 և 6230).

տարան»-ում: Նկարիչ Թորոսի այդ վաղ շրջանի մանրանկարում հատուկ ուշագրություն է զարձված Աստվածամոր ֆիգուրային, որի մեկնած ձևորեքը գեպի խաչված մրդին ավելի ուժեղ է արտահայտում Մոռանում վիշտը:

Պետք է նկատել, որ «Քրիստոսի խաչելու-
թյամբ», «Սսայի Նշեցու Աստվածաշնչում» շի-
տրված երրուսաղեմյան պատի ֆոնի վրա,
Դադարքային պատի փոխարեն, մանրանկա-
րի աջ մասում կա մի եկեղեցի՝ ներկացա-
ված կողքից, որն իր ձևով հիշեցնում է
Հայկական տաճարացին կառուցվածքները,
և այ ձախ մասում տրված է ժայռ: Մենք կար-
ուում ենք, որ ճարտարապետական կառուց-
վածքը տրված է ոչ պատահական կեր-
պով: Այդ բոլորը խոսում են նկարչի մտած-
վածության և վարպետության մասին, որը
նույնիսկ Հայունի պատկերագրական սիե-
մաների օգտագործման դեպքում տալիս է
մանրանկարի նոր և ստեղծագործական կոմ-
պոզիցիոն լուծում:

«Ծիրո համբարձումը» (նկար 20).— Այս մանրանկարում Քրիստոս տրված է մեծ լուսապատճենի մեջ և տանող շորս Քրիչտակիներով, որոնցից վերևի երկուսը փողհարում են եղանակի մեջ և տանող շորս Քրիչտակիներով։ Քրիստոսը համբարձվում է վեր, գետի երկինքը, գետի երկինային երուադեմ, նստած վիճակում։ աշ ձեռքով քննում է, իսկ ձախով ծնկների վրա պահում է Աստվածաշունչը։ Ներքեսով, գետնի վրա, կանգնած է Աստվածամայրը, երկու կողմից շրջապատված առաքյալներով։ Նրանք պատկերված են ոճավորված ժայռապատ սարի և ծառերի փոնի վրա։ Բոլոր դեմքերի ուշազրությունն ուղղված է վեր, բացի Մարիամից, որը տրված է օրանափ (աղոթողի) գիրքով։

«Համբարձումը» մանրանկարը կոմպոզիցիոն տեսակետից հաջող է: Տեսարանի երկու մասերը (վերին և ներքին) դիտվում են ամբողջական: Նրանք չեն կարգած մեկը մյուսից և այդ ոչ միայն նրանից է, որ երկինքը երկրի հարաբերությամբ տրված է որպես «սեպօ», այլ շնորհիվ ազատ թուող հինգերորդ հրեշտակի, որն ուժեղացնում է մանուանիանի նոին մասերի հապո:

«Համբարձումը» մանրանկարի պատկերադրությունը բխում է հին արևելյան օրինակներից և րյուգանքական սիմեմայից տարբերվում է գիշավորապես Աստվածամոր մասնիշաւակների բացակայությամբ և վերևում ներկայացված հրեշտակներով, որոնք փողարձում են Ազգերափողերով, իսկ Հոգանոսութեան մատնշի, հանված է առաջայների խմբից:

(Gurni&nbh,jh)